KANT

KNOWLEDGE FOR ANTI-MILITARISM AND NO-WAR TEACH-INS

«ՄԵՐ ՄՈԼՈՐԱԿԸ ՆՄԱՆ Է ՆՈՐԱԿՈՉԻԿԻ, ՈՐԸ ՔԱՅԼԵՐԹԻ ԺԱՄԱՆԱԿ ՔՐՏՆԵԼ Է»:

Ժամանակակից ռազմականացման ակունքները: Քննադատական ակնարկ:

Ո՞ր ժամանակներում և աշխարհի ո՞ր տարածաշրջաններում պետք է որոնել ժամանակակից միլիտարիզմի գաղափարախոսության և գործնական դրսևորումների ակունքները:

Եթե Իոսիֆ Բրոդսկու խոսքերը դիտարկենք որպես փոխաբերություն, որը շատ ճշգրիտ արտացոլում է ռազմականացման երկարատև գործընթացի արդյունքները, ապա կփորձենք գտնել հետևյալ հարցի պատասխանը.

Ինչպե՞ս պատահեց, որ պատմության որոշակի պահին մեր ամբողջ մոլորակը նմանվեց քայլերթի ժամանակ քրտնող նորակոչիկի: «Միլիտարիզմ» եզրույթն անմիջապես հուշում է պատերազմի, բանակի և զանգվածային զինված բռնությունն արդարացնող հատուկ գաղափարախոսության միջև ուղիղ կապի մասին: Կարելի է նաև դիտարկել ռազմական բյուջեների աճը: Այս թեման պարբերաբար քննարկվում է լրատվամիջոցներում: Սակայն կան շատ այլ թաքնված պատճառներ և կապեր, որոնց մասին մենք հաճախ չենք մտածում կամ պարզապես չգիտենք:

Միլիտարիզմի և տնտեսությունում գերիշխող կապիտալիզմի միջև գոյություն ունի ուղիղ կապ: Փաստն այն է, որ ժամանակակից միլիտարիզմի ձևավորումը սերտորեն փոխկապակցված է ժամանակակից կապիտալիստական տնտեսության կայացման գործընթացի հետ: Միլիտարիզմն ու կապիտալիզմը, իրենց հերթին, հավատարմորեն ծառայեցին նորագույն կայսրությունների՝ Հոլանդական, Բրիտանական, Ֆրանսիական, Ռուսական և շատ ուրիշների ստեղծմանը, ինչպես նաև ժամանակակից ազգային պետությունների ձևավորմանը:

Միլիտարիստական գաղափարախոսությունների և պրակտիկաներ զարգացումն ընթացավ ազգայնական գաղափարախոսության զարգացման հետ զուգահեռ և արտացոլվեց բանակների աստիճանական ազգայնացման մեջ: Արդյունքում զանգվածային ազգային, կամ՝ ինչպես կնախընտրեք, մշտական «ժողովրդական բանակները» փոխարինեցին շատ ավելի փոքրաթիվ ֆեոդալական ասպետական աշխարհազորային խմբերին և վարձկան բանակներին՝ կոնդոտիերներին, որոնք հավաքագրվում էին ռազմական արշավների ժամանակ և լուծարվում դրանց միջև ընկած ժամանակահատվածներում:

Իհարկե, նոր ժամանակներում հասարակությունների ռազմականացումը հասկանալու համար կարևոր է հասկանալ, թե ինչպես են փոխվել պատերազմ վարելու սկզբունքները, կամ՝ այլ կերպ ասած, **կազմակերպված կոլեկտիվ բռնության սկզբունքները:** Բայց շատ ավելի կարևոր է հետևել պատերազմների, կապիտալիզմի, իմպերիալիզմի, ազգային պետության և միլիտարիզմի միջև առկա խորքային և հաճախ անտեսանելի փոխհարաբերություններին: Կարևոր է նաև հասկանալ, թե ինչպես են փոխվել բազմաթիվ պատերազմների նպատակները: Այս պատերազմներն ավելի ու ավելի էին մղվում ոչ թե միապետերի, ֆեոդալների կամ որևէ կրոնական համայնքի շահերից ելնելով, այլ արագ աճող նոր բուրժուական դասակարգի շահերի համար:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին գերմանացի սոցիոլոգ Վերներ Զոմբարտը գրում էր.

> «Երբ մենք ուսումնասիրում ենք ժամանակակից կապիտալիզմի ակունքները և վերականգնում մեր հիշողության մեջ այն արտաքին հանգամանքները, որոնցում այն առաջացել է, մեր ուշադրությունը գրեթե անխուսափելիորեն գրավում են անդադար բախումներն ու պատերազմները, որոնցով լի էր դարաշրջանը՝ սկսած խաչակրաց արշավանքներից մինչև Նապոլեոնի ռազմական արշավները [...]: Պարզ դատողությունը մեզ հուշում է, որ, ամենայն հավանականությամբ, պատերազմի և կապիտալիզմի միջև կա որոշակի կապ ».

Զոմբարտը փորձեց հիմնավորել այս թվացյալ «պարզ» պնդումն իր «Պատերազմ և կապիտալիզմ» գրքում:

Նախքան շարունակելը՝ նշեմ, որ ԽՍՀՄ փլուզումից հետո սոցիալիստական շինարարության ձախողումները դարձան խանգարող հանգամանք կապիտալիզմի նկատմամբ քննադատական հայացք ձևավորելու համար՝ խոչընդոտելով դրա մութ կողմերի շուրջ քննադատական քննարկման զարգացմանը: Միլիտարիզմի քննադատական ուսումնասիրությունների հարուստ ավանդույթը, իր հերթին, մեծապես անհասանելի է մնում հետխորհրդային ընթերցողին: Այդ իսկ պատճառով էլ անհրաժեշտ է հիշեցնել կապիտալիզմի և միլիտարիզմի միջև ակնհայտ, կամ ինչպես Զոմբարտն է ասել՝ «պարզ» կապերի և

փոխհարաբերությունների մասին, որոնք արդեն երկար տարիներ քննարկումների առարկա են:

ՌԱԶՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից ռազմականացման ակունքները պետք է որոնել տարբեր եվրոպական պետությունների տարածքներում, մասնավորապես՝ Նիդերլանդներում, Շվեդիայում, Պրուսիայում և Ֆրանսիայում: Ժամանակակից միլիտարիզմը սկիզբ է առնում Վերածննդի և վաղ Նոր դարաշրջանի ընթացքում: Ժամանակակից ռազմականացման գաղափարախոսությունների, ինստիտուտների և պրակտիկաների ձևավորումը և բանակների ազգայնացման գործընթացը տևել է մի քանի դար՝ մոտավորապես XV–XVI-րդ դարերից մինչև XIX-րդ և XX-րդ դարի սկիզբը:

Պատերազմ վարելու ձևերի մասշտաբային փոփոխությունները կապված էին հրազենի գյուտի հետ: Հրետանին և մուշկետները փոխեցին բոլոր առկա կանոնները: Պատմաբան Մայքլ Ռոբերթսը շատ դիպուկ նկարագրեց այս արմատական փոփոխությունները, որպես «ռազմական հեղափոխություն»:

Շատ պատմաբաններ շարունակեցին զարգացնել Ռոբերթսի այս գաղափարը կամ էլ վիճարկեցին այն: Սակայն նրա մի շարք թեզեր այսօր էլ խիստ արդիական են: Հատկապես կարևոր են նրա մտորումներն այն մասին, **թե ինչ ազդեցություն ունեցավ «ռազմական հեղափոխությունը» պետական համակարգերի փոփոխության վրա:**

Ռոբերթսը նշում է, որ ռազմական ծախսերի աճի հետևանքով պետությունը ձգտում էր վերահսկել ռազմավարական ռեսուրսները (օրինակ՝ պղինձը կամ վառոդը) և ավելի ու ավելի հետևողականորեն էր միջամտում իր հպատակների կյանքին: Օրինակ՝ Շվեդիայում և Անգլիայում սելիտրա որոնողներն իրականացնում էին շատ կոշտ խուզարկություններ: Փոփոխությունները վերաբերում էին նաև ֆինանսական ոլորտին: Բանակները անընդհատ աճում էին, և դրանք պահելը կամ պատերազմ վարելը այլևս կարող էր ապահովել միայն պետությունը: Այնուամենայնիվ, անընդհատ մղվող պատերազմների պայմաններում բոլոր միապետերն էլ դիմում էին ֆինանսիստներին վարկեր ստանալու համար և խրվում պարտքերի մեջ:

Ռոբերթսը նաև նշում է, որ.

> «Ավելի խիստ կարգապահությունը, նոր գծային մարտավարությամբ պահանջվող մանրակրկիտ մշակված մեխանիկական վարժանքները համապատասխանում էին դարաշրջանի բացարձակ իշխանության միտմանը, և, ամենայն հավանականությամբ, ամրապնդում էին այն. գայթակղիչ է մտածել, որ կարգապահությունը, որն այդքան արդյունավետ էր մարտի դաշտում, կարող էր ոչ պակաս լավ արդյունքներ տալ, եթե կիրառվեր քաղաքացիական հասարակության մեջ: Կառավարիչը ավելի ու ավելի հաճախ էր նույնացվում գերագույն գլխավոր հրամանատարի հետ, և նոր կարգապահությունից ու շարային պատրաստությունից ծնվեց ոչ միայն ավտոկրատը, այլ այն յուրահատուկ տիպի ավտոկրատը, որը հպարտությամբ կրում էր Kriegsherr [«Զինապետ»] անունը»:

XVII-րդ դարի վերջում ձևավորվեց միտում, երբ բացարձակ միապետերը սկսեցին զինվորական համազգեստը համարել իրենց առօրյա հագուստը: Այդպես, օրինակ, վարվում էին Շվեդիայի թագավոր Կառլ XII-ը և Պրուսիայի միապետ Ֆրիդրիխ Վիլհելմ I-ը:

Ռոբերթսը նաև նշում է, որ.

> «[Նույն XVII-րդ] դարի վերջում միապետերը մեծամասամբ ստացել էին արդյունավետ վերահսկողություն իրենց բանակների նկատմամբ: Սա կարևոր իրադարձություն էր, քանի որ այն պահից, երբ բանակները դարձան թագավորական (ինչպես նաև նավատորմերը), ճանապարհ բացվեց դրանց վերջնական ազգային վերափոխման համար»:

Ինչը հենց տեղի էր ունենում ամբողջ 19-րդ դարի ընթացքում: Փորձենք մի քանի կոնկրետ օրինակներով պատկերավոր ներկայացնել այս երկարատև և բարդ գործընթացը:

Դրա համար ստիպված կլինենք հրաժարվել բազմաթիվ մանրամասների հիշատակումից, հակառակ դեպքում դասախոսությունը կարող է ձգվել տասնյակ ժամեր: Մենք կկենտրոնանանք ամենահայտնի և առանցքային պատմական դեմքերի և իրադարձությունների վրա, որպեսզի պատկերավոր ձևով ներկայացնենք ռազմականացման գործընթացի և

միլիտարիստական գաղափարախոսության առանձնահատկությունները:

Այս երևույթի ակունքներում շատ մարդիկ են կանգնած եղել: Նրանցից շատերի անունները վաղուց մոռացվել են: Սակայն ամենահայտնի, հաճախ իշխող էլիտայի անդամների՝ ազնվականների և միապետերի գործերը բավականին հայտնի են բազմաթիվ պատմաբանների հետազոտությունների շնորհիվ:

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՖՐԱՆՍԻԱ

Եվ այնուամենայնիվ, իմաստ ունի սկսել ոչ թե որևէ զորահրամանատարից կամ միապետից, այլ Ժակ Կյորից՝ XV-րդ դարի առաջին կեսի հայտնի ֆինանսական գործչից (Հարյուրամյա պատերազմի և Ժաննա դ'Արկի ժամանակաշրջան), որը եղել է Բուրժ քաղաքից մի հարուստ մորթու վաճառականի որդի և, որն ավելի է հարստացել Արևելյան Միջերկրածովի հետ վարած առևտրի շնորհիվ՝ մետաքս, պարսկական գորգեր և այլն: Իր կարիերայի գագաթնակետին նա Ֆրանսիայի թագավոր Կառլ VII-ի արքունիքում ծառայում էր որպես թագավորական գանձապետ:

Հենց այս կերպարն է բացում «Սատանայի մեծ պարահանդեսը» Բուլգակովի հայտնի «Վարպետը և Մարգարիտան» վեպում: Կորովևը շշնջում է Մարգարիտայի ականջին. «Թագուհի, ձեզ եմ ներկայացնում, հետաքրքրագույն տղամարդկանցից մեկը: Անկոտրում դրամանենգ, պետական դավաճան, բայց շատ կարգին ալքիմիկոս: Հռչակվել է նրանով, որ թունավորել է թագավորի սիրուհուն»:

Կարևոր չէ, թե այս պնդումներից որն է ճշմարիտ, որը՝ գեղարվեստական հորինվածք, և արդյոք Ժակ Կյորը թունավորել է թագավորի սիրուհուն՝ Ագնես Սորելին (ամենայն հավանականությամբ, դա նրա դեմ ուղղված զրպարտություն էր): Մեր թեմայի համար ավելի կարևոր է այն, որ Ժակ Կյորը, ինչպես կարծում են որոշ պատմաբաններ, եթե ոչ առաջինը, ապա առաջիններից մեկն էր այն գործիչների շարքում, ովքեր «պնդում էին, որ պետությունը պետք է զինված ուժեր ունենա նույնիսկ խաղաղ ժամանակ»: **Ապագայում այս միտումը կհանգեցնի մշտական բազմամարդ բանակների ստեղծմանը:** Պատահական չէ, որ իր ժամանակի այս ամենահարուստ մարդը կանգնած էր նաև Ֆրանսիայի

թագավորությունում ձևավորվող կապիտալիստական տնտեսության ակունքներում:

ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐ

Եկեք մի պահ թողնենք Ֆրանսիան և տեղափոխվենք XVI-րդ դարի վերջ – XVII-րդ դարասկիզբ, այսինքն՝ վաղ Նոր դարաշրջան, այն ժամանակվա Նիդերլանդների, այսօրվա Հոլանդիայի, Բելգիայի և Լյուքսեմբուրգի տարածք: Մորից Օրանացին այս հողերի շտադհոլդերն էր կամ կառավարիչը 1585-ից – 1625 թվականներին:

Այս պետական գործիչը և իր ժամանակի հայտնի զորահրամանատարը համարվում է Նիդերլանդների հիմնադիրը (այս երկու գործառույթների համադրությունը կդառնա բնորոշ երևույթ և ռազմականացման կարևոր նշան): Նա համարվում է ռազմական գործի վերափոխմանը նպաստած առանցքային գործիչներից մեկը: 1590 թվականին Մորիցը հիմնադրեց աշխարհում առաջին ռազմական ակադեմիան: Հարկ է ընդգծել, որ **ժամանակակից զանգվածային կրթական հաստատությունների կայացումը նույնպես սերտորեն կապված էր ռազմականացման հետ:** Ավելի շատ սպաներ էին անհրաժեշտ, ինչպես նաև՝ հրետանու և ընդհանրապես հրազենի օգտագործման մեջ հմուտ մարդիկ:

Նա հեղինակել է ռազմական գործին նվիրված դասագրքեր և գործնական ձեռնարկներ, այդ թվում՝ հետևակի համար նախատեսված կանոնների ժողովածու: Նա ստեղծել է հեծելազորի նոր տեսակ՝ ռեյտար կամ կիրասիր: Սրանք զրահակիր հեծյալներ էին, որոնք, բացի այլ զինատեսակներից, օգտագործում էին նաև հրազեն: Այս բոլոր նորարարությունները ներդրվեցին «Ութսունամյա պատերազմի», կամ Նիդերլանդական հեղափոխության՝ խորհրդային պատմագրության մեջ հայտնի որպես Նիդերլանդական բուրժուական հեղափոխության ժամանակ, որը սկսվել է XVI-րդ դարի կեսերին՝ 1566-68 թվականներին:

Այսօրվա Հոլանդիայի, Բելգիայի և Լյուքսեմբուրգի տարածքներում ապրող բնակչության և իսպանական թագի միջև այս երկարատև առճակատումն հանգուցալուծվեց Երեսնամյա պատերազմի ավարտով: Մորիցը մահացավ 1625 թվականին՝ այդպես էլ չտեսնելով դրա ավարտը: Նրա ամենակարևոր նորարարությունը վարձկանների

փոխարեն տեղացի բնակիչներին զորակոչելու համակարգն էր: Այլ կերպ ասած, դա տվյալ տարածքի կամ երկրի բնակչության համար զորակոչի համակարգ ստեղծելու եթե ոչ առաջին, ապա առաջին ամենահետևողական փորձերից մեկն էր:

Պատահական կամ միայն երկարատև պատերազմի պատճառով չէր, որ Նիդերլանդները դարձան այս բոլոր փոփոխությունների կենտրոնը: Մորից Օրանացու կենդանության օրոք այս տարածքում արագ ձևավորվեց ազդեցիկ և հարուստ բուրժուական խավ, և ստեղծվեցին բազմաթիվ մանուֆակտուրաներ՝ գործարանային արտադրության նախակարապետները: 1602 թվականին Հոլանդական Արևելահնդկական ընկերությունը (կայսերական էքսպանսիայի հաստատություններից մեկը) Ամստերդամում հիմնադրեց աշխարհի առաջին ֆոնդային բորսան և սկսեց առևտուր անել արժեթղթերով և բաժնետոմսերով: Այս տարածաշրջանում ծաղկում ապրեց նաև բանկային ոլորտը: Ամփոփելով՝ XVII-րդ դարում Նիդերլանդները համաշխարհային առևտրի և այդ ժամանակի ամենաառաջադեմ ֆինանսական հաստատությունների կենտրոնն էր: Երկարատև պատերազմ վարելը և մեծաքանակ մշտական բանակ պահելը պահանջում էին զգալի ֆինանսական միջոցներ: Մորից Օրանացին կարողացավ իրականացնել իր բարեփոխումներն ու փորձերը՝ իր վերահսկողության տակ գտնվող տարածքում կապիտալիստական արտադրաեղանակների արագ զարգացման շնորհիվ: Նիդերլանդներում նրա փորձերի համար բավարար ֆինանսավորում կար:

ՇՎԵԴԻԱ

Հաջորդ պատմական դեմքը՝ Գուստավ II Ադոլֆը, ծնվել է 1594 թվականին Ստոկհոլմում, Շվեդական թագավորությունում: Իր համեմատաբար կարճ կյանքի ընթացքում, նա հասցրեց հայտնի դառնալ որպես զորահրամանատար և ժամանակակից ռազմական կրթության հիմնադիր հայրերից մեկը (նա զոհվել է Լյուտցենի ճակատամարտում՝ 1632 թվականին, արյունալի Երեսնամյա պատերազմի ժամանակ): Նա այն պետության հիմնադիրներից մեկն էր, որը պատմաբանները անվանում են Շվեդական կայսրություն: Գուստավ Ադոլֆը ռազմական մարտավարության և

ռազմավարության բազմաթիվ բարեփոխումների և նորարարությունների հեղինակ էր:

Նա իր հորից՝ Կառլ IX-ից, ժառանգել էր կենտրոնացված միապետական համակարգ, որը թույլ էր տալիս նրան արդյունավետորեն մոբիլիզացնել այս համեմատաբար աղքատ և նոսր բնակեցված տարածքի ռեսուրսները (համեմատած գերմանական հողերի, Ֆրանսիայի կամ Նիդերլանդների հետ): Սա Շվեդական կայսրության համար տնտեսական բարգավաճման ժամանակաշրջան էր, որը մեծապես պայմանավորված էր աճող բանակի պահանջները բավարարելու անհրաժեշտությամբ:

Հարկ է հիշել, որ Գուստավ Ադոլֆը նաև խիստ կարգապահության կողմնակից էր: Նրա անվան հետ է կապվում մտրակահարության միջոցով տխրահռչակ պատժի գյուտը: Խախտում կատարած զինվորին տանում էին երկու շարքով կանգնած ծառայակիցների միջով, որոնք նրան հարվածում էին երկար, ճկուն մահակներով կամ փայտերով: Պատժի այս ձևը հետագայում լայնորեն կիրառվեց պրուսական, ռուսական և այլ բանակներում: Երկար շարքը և հազարավոր հարվածները, ըստ էության, նշանակում էին դաժան ու տանջալի մահապատիժ կարգազանց զինվորի համար:

Հիշեցնեմ, որ նրա անմիջական ժառանգը՝ թագավոր Կառլ XII-ը, որը կառավարել է Շվեդիայի կայսրությունը 1697-1718 թվականներին, Ռուսական կայսրությունը հիմնադրած Պետրոս Մեծի ամենաակնառու և վտանգավոր հակառակորդն էր: Պետրոս Առաջինի օրոք Ռուսական կայսրությունը ակտիվորեն մասնակցել է ռազմականացման գործընթացին՝ ընդունելով նորարարություններ, որոնք լայն տարածում ունեին Եվրոպայի տարբեր երկրներում: Եվ սա վերաբերում է ոչ միայն բանակների կազմավորման եղանակներին և պատերազմ վարելու կանոններին, այլև հենց այն մանուֆակտուրաների ստեղծմանը, որոնք սպասարկում էին աճող միլիտարիստական պահանջները: Ինչպես եվրոպական մյուս երկրներում, այստեղ նույնպես արագ զարգանում էր թնդանոթների և այլ զինատեսակների համար նախատեսված թուջի և երկաթի արտադրությունը, արագորեն ընդլայնվում էր տարատեսակ զինամթերքի (օրինակ՝ վառոդի), համազգեստների, ինչպես նաև նավաշինության ու սննդի մատակարարման հետ կապված արտադրությունը:

ԵՐԵՍՈՒՆԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ

Մինչև XVIII-րդ դարին անդրադառնալը, կարևոր է մի քանի խոսք ավելացնել Երեսնամյա պատերազմի մասին: Այս առաջին և չափազանց արյունալի համաեվրոպական հակամարտությունը, որը սկսվեց 1618 թվականին և ավարտվեց 1648 թվականին Վեստֆալյան հաշտությամբ, վճռորոշ փուլ էր եվրոպական հասարակությունների ռազմականացման գործում: Այս պատերազմի զոհերի ճշգրիտ թիվը անհայտ է: Սակայն, ամենալավատեսական գնահատականներով, զոհերի թիվը կազմում է ոչ պակաս, քան հինգ միլիոն: Այլ տվյալների համաձայն՝ զոհերի թիվը կազմում է 7 և նույնիսկ 9 միլիոն կամ ավելի: Ամենաշատը տուժեցին այն տարածքները, որոնք հետագայում դարձան Գերմանիայի մաս: Որոշ շրջաններ կորցրեցին իրենց բնակչության կեսից ավելին: Սա այն ռազմական փորձարկումների և բարեփոխումների գինն էր, որոնցում ներգրավված էին այդ իրադարձությունների մասնակիցները:

Մորից Օրանացու և Գուստավ Ադոլֆի հետ մեկտեղ, արժե հիշել նրանց որոշ հակառակորդների. օրինակ՝ Սրբազան Հռոմեական կայսրության գեներալիսիմուս Ալբրեխտ ֆոն Վալլենշտայնին, կամ ֆելդմարշալ կոմս ֆոն Տիլլին կամ Ալեքսանդր Դյումայի վեպի շնորհիվ լայն ճանաչում ստացած կարդինալ Արման դը Ռիշելյեին: Նրանք բոլորը մեծ բանակներ ֆինանսավորելու և պահելու եղանակներ էին փնտրում: **Հենց այս պատերազմի ժամանակ էր, որ սովորական դարձավ պատերազմող բանակներին պահել գրավված տարածքների հաշվին, ինչը հանգեցրեց բնակչության լայնամասշտաբ թալանի, զանգվածային բռնության և կողոպուտի:** Երեսնամյա պատերազմը, ընդհանուր առմամբ, աչքի ընկավ ծայրահեղ դաժանությամբ:

Բերթոլթ Բրեխտը Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին իր «Կուրաժ մայրիկն ու նրա երեխաները» պիեսում անդրադառնում է Երեսնամյա պատերազմի իրադարձություններին: Պիեսի խորամանկ և հնարամիտ հերոսուհին՝ վաճառականուհի մայր Կուրաժը, շահույթ է ստանում պատերազմից: Երբ զինվորագրողը համոզում է իր որդիներից մեկին միանալ բանակին, պիեսի հերոսներից մեկը՝ ֆելդֆեբելը, ցինիկաբար նշում է. «Եթե պատերազմից հաց ես պահանջում, պետք է նրան միս տաս»:

Այս պատերազմի դրվագներից մեկը՝ Մագդեբուրգի պաշարումը և գրավումը կայսերական զորքերի կողմից (1631), պատմության մեջ հայտնի է որպես Մագդեբուրգի կոտորած: Քաղաքի մոտավորապես 30,000 բնակիչներից կոտորածից փրկվեցին ոչ ավելի, քան 5,000-ը: Շատերը զոհվեցին հրդեհի ժամանակ: Քաղաքը վերածվեց ավերակների: Զինվորականները որսում էին կանանց և գերի էին վերցրել մոտ 5,000 մագդեբուրգցի կին: Այլ կերպ ասած, սա կանանց նկատմամբ զանգվածային բռնության ևս մեկ օրինակ է: Այս արյունալի իրադարձությունները անվանակոչվեցին հատուկ նորաբանությամբ, որով հարուստ է գերմաներենը. **«մագդեբուրգացում»՝** լիակատար ոչնչացման, զանգվածային բռնության և թալանի հոմանիշ:

Հուգո Գրոտիոսը՝ հոլանդացի փիլիսոփա, միջազգային իրավունքի հիմնադիր և այս իրադարձությունների ժամանակակիցը, ինչպես նշում է Մայքլ Ռոբերթսը.

> «սովորեցնում էր, որ ռազմագերիների սպանությունը օրինական է […]; որ թշնամու կալվածքների և քաղաքների անսահմանափակ ոչնչացումը թույլատրելի է, նույնիսկ եթե նրանք հանձնվել են; որ քաղաքացիական բնակչությունը առանձնահատուկ վերաբերմունքի իրավունք չունի; և որ «կանանց և երեխաների կոտորածը թույլատրվում է առանց պատժի, ինչպես նախատեսված է պատերազմի օրենքով»՝ դիրքորոշում, որը նա, իր սովորության համաձայն, ամրապնդեց համապատասխան մեջբերումով 137-րդ սաղմոսից. «Երանի՛ նրան, ով քո զավակներին կբռնի ու քարեքար կզարկի» […]: Այդ դարաշրջանի բացարձակ դաժան [Երեսնամյա] պատերազմը, որին Գրոտիոսը ստիպված էր հաշտվել, հատուկ շեշտադրում հաղորդեց Լևիաթանի տրամաբանությանը»:

Հիշեցնեմ, որ պետության՝ որպես «Լևիաթանի»՝ առասպելական աստվածաշնչյան, հսկայական, կրակ շնչող օձի կերպարը ստեղծվել է Երեսնամյա պատերազմի մեկ այլ ժամանակակցի՝ անգլիացի փիլիսոփա Թոմաս Հոբսի կողմից: Նրա աշխատություններում այս հզոր հրեշը դառնում է ուժեղ պետական իշխանության փոխաբերություն:

Չպետք է մոռանանք, որ միլիտարիզմը, որը խթանեց բազմաթիվ գիտական հայտնագործություններ և ամենատարբեր նորարարություններ (ինչպես կասեին դրա կողմնակիցները), պահանջում էր դրանց համար վճարել ամենաբարձր գինը: Դաժան պատերազմներ և միլիոնավոր կործանված կյանքեր, պատերազմների բռնության և ավերածությունների անընդհատ աճ՝ զուգորդված պետության ամրապնդման և նրա հպատակների, իսկ ավելի ուշ՝ քաղաքացիների կյանքի նկատմամբ վերահսկողության աճի հետ. **սա այն գինն է, որը պետք է անընդհատ վճարվեր:** Դարից դար, թագավորություններից մինչև հանրապետություններ, Լևիաթանը ավելի ու ավելի հզորացավ: Երեսնամյա պատերազմին հաջորդող դարերում պետական իշխանությունը հետևողականորեն զարգացնում էր հավաքագրման մեքենան, որը, ինչպես հավանաբար կասեր Բրեխտի ուղղախոս ֆելդֆեբելը, զբաղված էր հերթական պատերազմի համար «միս» հավաքագրելով: Գինը միշտ միայն բարձրանում էր, մինչդեռ բազմաթիվ բուրժուական ձեռնարկատերերը՝ կապիտալիստները, ավելի ու ավելի շատ «հաց» էին ստանում, ավելի ու ավելի լայն հնարավորություններ՝ պատերազմներից և ռազմականացումից հսկայական կարողություններ կուտակելու:

ՊՐՈՒՍՅԱՆ

Անմիջապես տեղափոխվենք XVIII-րդ դար, մեկ այլ թագավորություն՝ Պրուսիա: Անցում կատարենք Իմանուիլ Կանտի ժամանակները: Այս ականավոր գերմանացի փիլիսոփան իր երկար կյանքի մեծ մասն ապրել է Պրուսիայի երկու միապետերի՝ Հոհենցոլերների դինաստիայի ներկայացուցիչների օրոք:

Ֆրիդրիխ Վիլհելմ I-ը Պրուսիայի ամենամեծ գերմանական թագավորությունը կառավարել է 27 տարի՝ մինչև 1740 թվականը: Զինվորական զորավարժությունների, կարգապահության և բանակի նկատմամբ ունեցած իր սիրո համար նրան կոչում էին «զինվոր-արքա»: Սակայն նա ուներ նաև բազմաթիվ այլ, շատ ավելի քիչ գովասանական մականուններ: Պատմաբան Վոլֆգանգ Ֆենորի խոսքերով՝ «պրուսական զինվոր-արքան միշտ վատ համբավ է ունեցել: Բոլոր եվրոպական արքունիքներում պրուսական «հիմար

զինվորին» ծաղրի են ենթարկել: Նրան անվանել են «գահին նստած ֆելդֆեբել»:

Կանտի ժամանակակից՝ ականավոր փիլիսոփա և մտավորական Վոլտերը, իր հուշերում Ֆրիդրիխ Վիլհելմի մասին գրել է.

> «Իսկական վանդալ, որն իր գահակալության ողջ ընթացքում մտածում էր միայն ավելի շատ գումար կուտակելու և Եվրոպայի լավագույն բանակը նվազագույն ծախսերով պահպանելու մասին »

Այնուամենայնիվ, այս, ըստ Վոլտերի, Եվրոպայի լավագույն բանակը ստեղծվել է հենց այս «վանդալ» թագավորի կողմից: Եվ այս ոլորտում նրա հաջողության գաղտնիքը մեծապես կայանում էր նրանում, որ նա թագավորության տնտեսությունը ենթարկեց մեկ գլխավոր նպատակի՝ ստեղծել հնարավորինս «լավագույն բանակ»: Այլ կերպ ասած, նա պարզապես ռազմական բարեփոխիչ չէր: Գահ բարձրանալուն պես նա թագավորության ղեկավարի իր պաշտոնը սահմանեց հետևյալ կերպ.

«Ես՝ Ֆրիդրիխ Վիլհելմս, Պրուսիայի թագավորության գլխավոր ֆինանսիստն ու ֆելդմարշալն եմ»:

Ֆենորի խոսքերով՝ նրա ամենամեծ կիրքը եկամուտների հաշվարկն էր, խնայողությունն ու ֆինանսների վերահսկողությունը: Այս կիրքը ի հայտ էր եկել դեռ վաղ տարիքից: Տասներորդ տարեդարձի առթիվ հայրը նրան նվիրեց Վուսթերհաուզենի որսորդական դղյակը, և դրա հետ մեկտեղ՝ կադետների մի վաշտ, որը բաղկացած էր խաղալիք զենքերով զինված գյուղացի տղաներից:

Վոլֆգանգ Ֆենորը ընդգծում է, որ մանկուց կալվածքը ղեկավարելու փորձի շնորհիվ, որը.

> «կիսով չափ գյուղացիական տնտեսություն էր, կիսով չափ՝ ռազմական ստորաբաժանում», ապագա թագաժառանգի մոտ ձևավորվում է խորքային ըմբռնում բանակի և ֆինանսների անքակտելի կապի, ինչպես նաև պետության ու բանակի տնտեսական փոխազդեցության պատճառների վերաբերյալ»:

Ֆրիդրիխ Վիլհելմի անվան հետ է կապված **«պրուսական զորավարժանք»** արտահայտությունը՝ չափազանց խիստ

կարգապահություն, որը ձևավորվում էր նույն շարային վարժանքների բազմակի և հյուծիչ կրկնության միջոցով:

Այսպիսով նա ստեղծեց նոր և 18-րդ դարի համար չափազանց արդյունավետ գծային մարտավարություն: Այսուհետ զինվորական ծառայությունը հիմնված էր խիստ կազմակերպվածության վրա, որը հիմնված էր խիստ կարգապահության վրա: Փոփոխությունների խորհրդանիշ դարձավ կապույտ համազգեստը, որն այն ժամանակ հայտնի էր որպես «բեռլինյան լազուր»: Այս գույնն այսուհետ խորհրդանշում էր պրուսական բանակին պատկանելը:

Բայց ավելի կարևոր է, որ այս ռազմական կազմակերպվածությունը, որն այդքան հարազատ և հասկանալի էր Ֆրիդրիխ Վիլհելմի համար, տարածվեց ամբողջ պետության վրա: Ինչպես նշում է Ֆենորը.

> «Սկզբից ևեթ նա վճռել էր արմատապես վերափոխել պրուսական աշխարհը՝ վերաձևավորելով այն երկու օրենքների համաձայն, որոնք նա, Աստծո հանդեպ երկյուղի հետ մեկտեղ, համարում էր գերագույն՝ խնայողությունն ու կարգուկանոնը: Նա իրեն համարում էր Աստծո տեղակալ Պրուսիայում, և այստեղ բոլորը պետք է կուրորեն հնազանդվեին նրան: Նրա հրամանատարության ներքո ամբողջ պետությունը պետք է առաջ շարժվեր ինչպես գումարտակ՝ հավասար շարքերով, ուս ուսի տված:

Նույն Ֆենորի խոսքերով՝ Ֆրիդրիխ Վիլհելմը «կարողացավ վերակառուցել պրուսական տնտեսությունը՝ բանակի կարիքներին համապատասխան [...] և բանակը դարձնել նոր ազգային տնտեսության թափանիվը»:

Պրուսական բրդի արդյունաբերությունը դարձավ նոր տնտեսության հիմնական բաղադրիչը: Դրա հիմնական խնդիրը անընդհատ աճող բանակի համար համազգեստի արտադրությունն էր: Թագավորության ողջ տարածքում ստեղծվեցին մանուֆակտուրաներ: Արդեն 1725 թվականին Պրուսիան սկսեց համազգեստ մատակարարել Ռուսական կայսրությանը: Այս արդյունաբերությանը հաջորդեցին զենքի մանուֆակտուրաները: Նրա գահակալության ավարտին Պրուսիան լիովին ապահովում էր բանակը զենքով:

Պետական բյուջեի բաշխվածությունը շատ բան է բացահայտում XVIII-րդ դարում պրուսական հասարակության և տնտեսության

ռազմականացման աստիճանի մասին: 1713 թվականին՝ Ֆրիդրիխ Վիլհելմի գահակալությունից առաջ, բանակի վրա ծախսվում էր 2.4 միլիոն թալեր, իսկ այդ գումարի կեսը՝ 1.2 միլիոն՝ մնացած բոլոր ոչ ռազմական ծախսերի վրա: Նրա գահակալության ավարտին թագավորության բյուջեն կրկնապատկվել էր: Սակայն հարաբերակցությունը մնացել էր նույնը՝ 4 միլիոն 800 հազար՝ բանակի համար, և երկու անգամ քիչ՝ 2 միլիոն 400 հազար՝ մնացած բոլոր ծախսերի համար: Այս տեսակի անհամամասնությունը բացառիկ երևույթ չէր: Բանակներ պահելու և պատերազմներ վարելու ծախսերը կազմում էին նաև այլ թագավորությունների և կայսրությունների բյուջեների հիմնական հոդվածները:

ԼՈՒՍԱՎՈՐՎԱԾ ԱԲՍՈԼՅՈՒՏԻԶՄ

Ֆրիդրիխ Վիլհելմ I-ն իր թագավորությունը թողեց իր ավագ և չսիրած որդուն՝ Ֆրիդրիխ II-ին, որն, իր հերթին, ատում էր հորը, և որն իր գահակալության տարիների ընթացքում արժանացավ «Մեծ» տիտղոսին: Վոլտերի վերոնշյալ հուշագրություններում հոր և որդու միջև հարաբերությունները նկարագրվում են հետևյալ կերպ.

> «Կարելի է պատկերացնել, թե որքան զարմացած և զայրացած էր այդ վանդալը [Ֆրիդրիխ Վիլհելմ I]՝ տեսնելով, թե ինչպես է մեծանում իր որդին՝ լի հնարամտությամբ, նրբագեղությամբ, քաղաքավարությամբ և հաճոյանալու ցանկությամբ, որդին, որը ձգտում էր ինքնակրթվել, զբաղվում էր երաժշտությամբ և գրում էր բանաստեղծություններ: Եթե նա գիրք էր տեսնում թագաժառանգի ձեռքում, այն նետում էր կրակը: Եթե արքայազնը նվագում էր ֆլեյտա, հայրը կոտրում էր այն...»

Այսպիսի բնավորությունը ոչ մի կերպ չխանգարեց, որ Ֆրիդրիխ II Մեծը, ում անվանում էին «փիլիսոփա արքա», վարեր նույն միլիտարիստական և ֆինանսական քաղաքականությունը, ինչ իր հայրը: Ֆրիդրիխ II-ը Լուսավորական բացարձակապետության դարաշրջանի փայլուն օրինակ էր: Դա մի ժամանակ էր, երբ շատ միապետեր հայտարարեցին իրենց հավատարմությունը Լուսավորության գաղափարներին՝ պահպանելով պետության նկատմամբ բացարձակ վերահսկողությունը: Տնտեսական քաղաքականության մեջ Ֆրիդրիխ Մեծը, ինչպես իր հայրը և

եվրոպական միապետերի մեծ մասը, հավատարիմ էր մերկանտիլիզմին:

> «Մերկանտիլիզմը թելադրում էր ինտենսիվ միջազգային առևտրային քաղաքականություն՝ ներմուծման և արտահանման դրական հաշվեկշռով (հնարավորինս շատ ներմուծում և որքան հնարավոր է քիչ արտահանում, երկրի տնտեսության պաշտպանություն բարձր մաքսատուրքերով և հնարավորինս շատ թանկարժեք մետաղներ կուտակելու ձգտում)»:

Հյուսիսային Եվրասիայի նոր կայսերական պատմություն, հատոր 2:

Ինչ վերաբերում է բանակին, այն հիմնված էր կրտսեր զինվորական կոչումների խիստ ենթակայության և նույնքան խիստ կարգապահության վրա: Պատմաբան Յուրի Նենախովի խոսքերով՝ այս համակարգը

> «ամրապնդվում էր կանոնակարգերի և ձեռնարկների երկաթե օրենքներով, որոնք բառացիորեն կարգավորում էին զինվորի կյանքի յուրաքանչյուր րոպեն: Մահակը շատ ավելի մեծ, եթե ոչ ամենակարևոր դերն էր խաղում պրուսական, քան որևէ այլ եվրոպական երկրի բանակում:

Հետագայում շատ սպաներ դարձան քաղաքացիական պաշտոնյաներ՝ քաղաքացիական ծառայության մեջ ներմուծելով խիստ կանոնակարգված ռազմականացված գործելակերպը, որին նրանք սովոր էին իրենց զինվորական ծառայության ընթացքում: **Նման ռազմականացված հասարակությունում զինվորականներին տրված ակնառու և պատվավոր տեղը դարձավ ժամանակաշրջանի առանձնահատկությունը ոչ միայն Պրուսիայում, այլև շատ այլ եվրոպական միապետություններում:**

Պատմաբան Ֆրիդրիխ Մայնեկեն այս իրավիճակը նկարագրում է հետևյալ կերպ.

> «Պրուսական լեյտենանտը քայլում էր աշխարհով մեկ՝ ինչպես աստված, մինչդեռ բուրժուական պահեստազորի լեյտենանտը՝ առնվազն՝ ինչպես կիսաստված: Անհրաժեշտ էր պահեստազորի սպայի կոչում ստանալ՝ բուրժուական հասարակությունում և հատկապես պետական ծառայությունում լուրջ ընկալվելու համար»:

> «Մասնագիտական ոլորտում ամենաբարձր նվաճումները, թե՛ շքերթի հրապարակում, թե՛ մարտադաշտում, դարձան բացարձակ արժեք, ընդ որում՝ շքերթի հրապարակում՝ հատուկ հաշվարկով և տեխնիկայով: Այստեղ մարդուն մարզում էին, այսինքն՝ ռացիոնալ սխեմայի համաձայն, վերածում էին մի էակի, որը կարող էր կուրորեն զոհաբերել իր կյանքը ուրիշի կողմից սահմանված նպատակի համար: Մարդը դառնում էր մի փոքրիկ պտուտակ, ատամնանիվ մեծ մեքենայի մեջ [...]: Այս մեխանիկական հրաշքը դարձավ ինքնանպատակ. երկրի բոլոր բնակիչները պետք է խոնարհվեին դրա առջև»:

Այս համակարգը կարելի է անվանել ոչ միայն Լուսավորական բացարձակապետություն, այլև **ռազմա-բյուրոկրատական բացարձակապետություն:** Զինվորական համազգեստով միապետը, հանդիսանում էր բացարձակ կառավարիչ: Նա հենվում էր և՛ բանակի, և՛ բյուրոկրատական ապարատի վրա, որը մեծ մասամբ կառուցված էր միլիտարիստական սկզբունքների՝ կոչումների, աստիճանակարգերի, խիստ ենթակայության և սեփական պաշտոնեական կարգապահության վրա:

XVIII-րդ դարի վերջին տեղի ունեցած երկու իրադարձություններ կհանգեցնեին պետության և տնտեսության գործունեության արմատական փոփոխությունների: Մոտ 1780-ական թվականներին սկսվեց տասնամյակներ տևած **Բրիտանական արդյունաբերական հեղափոխությունը:** Մեծ Բրիտանիան՝ իր երկաթուղիներով և գործարաններով, դարձավ կապիտալիստական տնտեսությունների զարգացման մոդել այլ երկրների համար:

ՆԱՊՈԼԵՈՆՅԱՆ ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիական Մեծ հեղափոխությունը սկսվեց 1789 թվականի ամռանը: Այս իրադարձությունը նշանակալից էր մի շարք պատճառներով: Պատմաբան Էրիկ Հոբսբաումի խոսքերով՝

> «Նախ և առաջ, այն տեղի ունեցավ Եվրոպայի ամենահզոր և ամենախիտ բնակեցված պետության տարածքում (բացառությամբ Ռուսաստանի): 1789 թվականին եվրոպացիներից յուրաքանչյուր հինգերորդը ֆրանսիացի էր»:

Երկրորդ, դա

> «ամենազանգվածային սոցիալական հեղափոխությունն էր և անհամեմատ ավելի արմատական, քան որևէ այլ հեղափոխություն»:

Վերջապես,

> «Երրորդ՝ բոլոր ժամանակակից հեղափոխություններից միակն էր, որ համաշխարհային դարձավ: Նրա բանակները տարածեցին թե՛ հեղափոխությունը, թե՛ նրա գաղափարները ամբողջ աշխարհով մեկ»:

Այս հեղափոխության ևս մեկ կարևորագույն արդյունքը կայանում էր նրանում, որ.

> «Ֆրանսիան դարձավ ազգայնականության առաջին մեծագույն օրինակը, հայեցակարգը և բառապաշարը»:

Հեղափոխական, ապա նաև նապոլեոնյան Ֆրանսիայի և Բրիտանական կայսրության միջև մրցակցությունը, 1804 թվականին կայսր հռչակված Նապոլեոն Բոնապարտի նկրտումները, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի ձգտումը՝ կանխելու նրա գերիշխանությունը եվրոպական մայրցամաքում և պայքարը անդրծովային գաղութների համար՝ այս բոլոր իրադարձությունները հանգեցրին երկարատև զինված հակամարտության: Նույն Էրիկ Հոբսբաումի խոսքերով՝ 1792-ից մինչև 1815 թվականը Եվրոպայում պատերազմները գրեթե չեն դադարել: Նապոլեոնի օրոք անվերջ պատերազմներ վարելու և բազմամարդ բանակներ պահելու ֆինանսական ծախսերը երբեք չեն նվազել կայսրության ընդհանուր բյուջեի 60%-ից ցածր: Սա այն դեպքում, երբ Նապոլեոնի օրոք ակտիվորեն կիրառվում էր նվաճված տարածքների ռեսուրսները բանակները պահելու համար օգտագործելու սկզբունքը: Այսպիսով, Ֆրանսիայում ձևավորվող կապիտալիստական տնտեսությունը նախ և առաջ աճեց բանակի շահերը սպասարկելու և պատերազմներ մղելու միջոցով:

Ֆրանսիան մարտադաշտ էր դուրս բերում ամենամեծ բանակները, որոնց թվաքանակը հասնում էր հարյուր հազարների: Ռուսական կայսրության ներխուժման պահին նրա բանակի թիվը հասել էր 700,000-ի: Այս իրադարձությունները դարձան յուրօրինակ

նախերգանք՝ ամբողջ XIX-րդ դարի ընթացքում զանգվածային ազգային բանակների ձևավորման համար:

ԿՈՆՍԿՐԻՊՑԻԱ

Պատմաբան Յուջին Վեբերի խոսքերով՝

> «Ֆրանսիայում համակարգված զորակոչը սկիզբ է առել 1798 թվականից: Դրա ընդհանուր առանձնահատկությունները […] սահմանվել են կայսերական շրջանում, երբ Նապոլեոնը ներդրեց զորակոչի վիճակախաղը և սահմանեց զինվորական ծառայությունից ազատման հիմքերը»:

Զորակոչը (կոնսկրիպցիա) եզրույթ է, որն օգտագործվում է վիճակահանության վրա հիմնված զորակոչի գործընթացը նկարագրելու համար: Այլ կերպ ասած, զորակոչային տարիքի տղամարդիկ ընտրվում են վիճակահանությամբ: Շրջադարձային պահը կայանում է նրանում, որ **զորակոչը նշանավորեց համընդհանուր զինվորական ծառայության սկզբունքի աստիճանական ներդրումը:** Ֆրանսիայում ներդրված զորակոչը հետագայում օրինակ դարձավ շատ այլ երկրների համար: Այն համընդհանուր զինվորական զորակոչի նոր ձև էր տվյալ երկրի բնակիչների՝ որոշակի տարիքի տղամարդկանց համար, ովքեր այսուհետ պարտավոր էին ծառայել բանակում: Բանակները դառնում էին ավելի ու ավելի բազմամարդ և աստիճանաբար վերափոխվում էին ազգային բանակների: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին այս համակարգն արդեն ձեռք կբերեր XX-րդ դարից մեզ ծանոթ առանձնահատկությունները:

Յուջին Վեբերը այսպես է նկարագրում ֆրանսիական հասարակության զանգվածային ռազմականացման այս երկարատև գործընթացի ավարտը Մեծ աղետի (ինչպես հետագայում կկոչվի Առաջին համաշխարհային պատերազմը) նախօրեին.

> «1889 թվականին ծառայության ժամկետը կրճատվեց մինչև երեք տարի, 1500 ֆրանկի արտոնությունը չեղարկվեց, և նախկինում ազատված բոլոր անձինք (մասնավորապես՝ ուսանողներ, ուսուցիչներ, քահանաներ, կիսաաղքատներ, այրիների և բազմազավակ ընտանիքների ավագ որդիներ)

> պարտավորվեցին մեկ տարի ծառայել դրոշի ներքո: Այս որոշումը վայելում էր լայն ժողովրդականություն: Սա դարձավ վճռորոշ պահը, երբ բոլոր ֆիզիկապես առողջ ֆրանսիացիները սկսեցին ծառայել ազգային դրոշի ներքո: 1905 թվականին ծառայության ժամկետը բոլորի համար դարձավ երկու տարի, իսկ 1913 թվականին այն կրկին դարձավ երեք տարի»:

Այնուհետև Ֆրանսիան, ինչպես և մյուս եվրոպական երկրները՝ Գերմանիան, Բրիտանիան, Ռուսական կայսրությունը, Իտալիան և մյուսները, Առաջին աշխարհամարտի ռազմաճակատներ ուղարկեցին միլիոնավոր բանակներ:

Մայքլ Ռոբերթսը, ով հորինել է «ռազմական հեղափոխություն» տերմինը, ամփոփում է իր վերլուծությունը՝ նշելով, որ

> «1560-1660 թվականների միջև եվրոպական աշխարհում տեղի ունեցավ մեծ և անդառնալի փոխակերպում: [...] 1660 թվականին արդեն իսկ ի հայտ էր եկել պատերազմի ժամանակակից արվեստը: Հսկայական բանակներ, խիստ կարգապահություն, պետական վերահսկողություն, անհատի ճնշում՝ այս ամենը արդեն դարձել էր իրականություն: Ֆինանսական իշխանության և կիրառական գիտության համակցված գերակայությունն արդեն հաստատվել էր իր ողջ դաժանությամբ: Քարոզչության, հոգեբանական պատերազմի և ահաբեկչության օգտագործումը որպես պատերազմի զենք արդեն լավ հայտնի էր թե՛ տեսաբաններին, թե՛ զորահրամանատարներին մարտադաշտում: Պատերազմի կրոնական և բարոյական օրինականության վերաբերյալ վերջին կասկածները, կարծես, վերացել էին: Լայն և ուղիղ ճանապարհը բաց էր դեպի քսաներորդ դարի անդունդը»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, այս կետում կանգ կառնենք: Առաջին համաշխարհային պատերազմին տանող գործընթացների և XX-րդ դարի ռազմականացման թեման պահանջում է առանձին քննարկում:

Ամփոփելով՝ կնշեմ միայն, որ հաճախ կարելի է լսել այն կարծիքը, որ միլիտարիզմը, կապիտալիզմի և ազգայնականության հետ

համատեղ, նպաստել է շատ ավելի հարուստ հասարակությունների ձևավորմանը: Իսկապես բազմաթիվ օգտակար գյուտեր ուղղակիորեն կապված են ռազմականացման և պատերազմների հետ: Բայց այս տրամաբանությամբ, ռազմականացման զոհասեղանին կատարված զոհաբերությունները դառնում են պատահական, արդարացված: XVII-րդ, XVIII-րդ և XIX-րդ դարերի բազմաթիվ պատերազմներում զոհված մարդիկ այսօր մեզ թվում են անիրական՝ ասես գեղարվեստական պիեսի դերասաններ: Բայց նրանք նույնպիսի մարդիկ էին, ինչպես դուք և ես: Եվ նրանց կյանքը ոչնչացվեց ու զոհաբերվեց ամենևին ոչ առաջընթացի կամ նոր գյուտերի համար: Ամեն ինչ ճիշտ հակառակն էր: Պատերազմներ նախաձեռնելով, իրենց հասարակությունները ռազմականացնելով և զանգվածային բռնության մղելով՝ իշխող դասակարգերը, միլիտարիստները և կապիտալիստները հետապնդում էին բոլորովին այլ նպատակներ: Նրանք ձգտում էին ռազմական առավելության և գերիշխանության: Այս ամբողջ համակարգը կառուցված էր հրեշավոր շահագործման վրա. XVII-րդ և XVIII-րդ դարերի մանուֆակտուրաներում, իսկ ավելի ուշ՝ XIX-րդ դարի գործարաններում աշխատանքային պայմանները սարսափելի էին: Ի վերջո, կարելի է հեշտությամբ ենթադրել, որ եթե ժամանակակից բանակների ստեղծման վրա ծախսված հսկայական գումարները ուղղվեին կրթության, առողջապահության, մշակույթի և գիտության զարգացմանը, ապա ոչ պակաս օգտակար գյուտեր կլինեին, և դրանց գինը անհամեմատ պակաս վախեցնող կլիներ:

Տեքստի հեղինակ՝ Սերգեյ Ռումյանցև

Էջադրող՝ Կատյա Չիգալեյչիկ

Վերնագիր՝ «Մեր մոլորակը նման է նորակոչիկի, որը քայլերթի ժամանակ քրտնել է. ժամանակակից ռազմականացման ակունքները: Քննադատական ակնարկ»

Աուդիոդասախոսության սղագրություն «Weg zum Frieden. Demilitarizing Mind - Supporting Peace» նախագծի շրջանակներում:

2025

KANT